

Բանալի բառեր՝ բազմակողմ համագործակցություն, համաձայնագրեր, օտարերկրյա ներդրումներ, արտահանման կառուցվածք, Միջազգային տնտեսական կազմակերպություններ:

ՀՏԴ 339.9(479.25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության թեմա՝
Բազմակողմ տնտեսական դիվանագիտության հիմնախնդիրները ԵԱՏՄ շրջանակներում

Ռոբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Կորյուն ԱԹՈՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ տնտեսական դիվանագիտության կառուցման սկիզբը դրվել է 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ անկախության հռչակագրի ընդունումից հետո: Հռչակագրի 6-րդ կետում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը»:

Արտաքին քաղաքականության պատասխանատուն Արտաքին գործերի նախարարությունն է, որի գերակա խնդիրներն ընդունվել են ՀՀ կառավարության կողմից 2014 թվականին¹: Դրանց շարքում տնտեսական դիվանագիտության առնչվում են՝

- Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցության և ռազմավարական հարաբերությունների առավել խորացումն ու ընդլայնումը,
- ԱՄՆ հետ բարեկամական գործընկերության ամրապնդումը,
- Եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, Եվրոպական միության հետ հարաբերությունների զարգացման քաղաքականության շարունակականությունը, համագործակցության նոր իրավական ձևաչափի ձևավորումը,
- անդամակցությունը մաքսային միությանը և մասնակցությունը Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացներին,
- ԱԴՀ անդամ երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների խորացումը և ակտիվ մասնակցությունը ընթացող գործընթացներին,
- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների հետագա զարգացումը,
- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և Ասիայի այլ երկրների, Աֆրիկայի պետությունների հետ հարաբերությունների զարգացումը,
- Մերձավոր Արևելքի ավանդական գործընկերների հետ փոխգործակցության զարգացումը,
- Կանադայի և Հարավային Ամերիկայի երկրների հետ համագործակցության զարգացումը,
- հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորումը,
- միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներգրավվածությունը և ՀՀ շահերի պաշտպանությունը,
- միջազգային և տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ հարաբերությունների զարգացումը, Հայաստանի Էներգետիկ անվտանգության ապահովումը, հաղորդակցության ոլորտի ապաշրջափակումը, զարգացումն ու դիվերսիֆիկացումը, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտումը և արտաքին ներդրումների խրախուսումը:

ՀՀ տնտեսական դիվանագիտության իրականացման արդի գործընթացները համարժեք են ժամանակակից միտումներին, դրանք ունեն բազմամակարդակ համակարգ: Այսպես, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության միջազգային տնտեսական համագործակցության ոլորտում իրականացվող քաղաքականությունը պայմանավորված է ընտրված գերակայությունների շրջանակներում ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցության խորացմամբ և Հայաստանի համար առավել նպաստավոր նոր հարաբերությունների հաստատմամբ: Եվ ընդհանուր առմամբ՝ կատարվող նպատակաուղղված և հետևողական աշխատանքը մասնավորապես ընդգրկում է՝

- ՀՀ կողմից առևտրատնտեսական ոլորտի երկկողմ և բազմակողմ միջազգային համաձայնագրերի կնքումը,
- նախարարության կողմից համակարգվող օտարերկրյա պետությունների հետ առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը
- ՀՀ առևտրական ներկայացուցչությունների գործունեությունը,
- միջազգային կազմակերպությունների հետ տնտեսական համագործակցության համակարգումը,
- հանրապետական և միջազգային առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներին և գործարար համաժողովներին հայաստանյան արտադրանքը ներկայացնող մասնակիցներին խորհրդատվական, կազմակերպական և այլ օգնության ցուցաբերումը և այլն²:

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. գերակա խնդիրները: ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի, թիվ 10 - Ն որոշում: http://www.mfa.am/u_files/file/reports/2014mfaevents.pdf

2007 թ. փետրվարի 7-ին ընդունված «Ազգային անվտանգության ռազմավարություն»-ում ընդգծվում է, որ «Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը իրականացվում է երեք հիմնական հարթություններով՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական»³:

1992 թ. դառնալով ՄԱԿ-ի անդամ՝ Հայաստանն ակտիվորեն մասնակցում է կազմակերպության շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների, օժանդակ մարմինների և օղակների հետ: Մասնավորապես, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ, FAO) 1993 թ. նոյեմբերին անդամակցելուց հետո մեր երկրում իրականացվել են ագրարային հատվածի զարգացմանը նպաստող մի շարք ծրագրեր և ապահովվել է դրանց ֆինանսավորումը:

ՊԳԿ-ի հետ համագործակցությունը խթանելու նպատակով 2002 թ. նոյեմբերի 1-ին հռոմում բացվել է ՀՀ մշտական ներկայացուցչությունը, իսկ 2004 թ. սեպտեմբերին կազմակերպությունը ներկայացուցչություն է բացել Հայաստանում:

Մինչև 2003 թ. ՊԳԿ-ն իր գործունեությունը ՀՀ-ում իրականացրել է ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (UNDP) հայաստանյան գրասենյակի միջոցով: Կազմակերպության կողմից ՀՀ-ին ցուցաբերած աջակցության ընդհանուր ծավալը կազմում է ավելի քան 12 մլն. դոլար⁴: 2008 թ. օգոստոսի 5-ին երևանում ստորագրվել է «Գյուղատնտեսական ապրանքների մատակարարում խոցելի բնակչությանը՝ սննդամթերքի գնաճի դեմ ուղղված նախաձեռնության ներքո» ծրագրի իրականացման վերաբերյալ համապատասխան պայմանագիր: Ծրագրի բյուջեն 500 հազար դոլար էր, տևողությունը՝ 12 ամիս, նպատակը՝ 2007-2008 թթ. ձմռան ցրտահարությունից և սննդամթերքի գնաճից տուժած Հայաստանի 10 մարզերի անապահով գյուղական շրջանների մոտ 4500 գյուղացիական տնտեսություններին հացահատիկի սերմացուով և պարենային ապրանքներով բավարարելն էր: 2009 թ. մարտի 3-ին երևանում ստորագրվել է «Անտառների վերականգնում և անտառապատում» ծրագիրը՝ 432.000 ԱՄՆ դոլար բյուջեով:

Եվրոպական կառույցների, առաջին հերթին, ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից է: Եվրոպական միության՝ որպես համաշխարհային քաղաքականության և տնտեսության առաջատար կենտրոններից մեկի հետ հարաբերությունների զարգացումը կարևորվում է առևտրատնտեսական կապերի զարգացման, ինտեգրման գործընթացների խորացման առումով: Հայաստանի ընդգրկումը «Եվրոպական հարևանության քաղաքականություն» (ԵՀՔ) ծրագրի մեջ զգալի առաջընթաց է եվրոպական ներգրավման ճանապարհին:

2017 թ. նոյեմբերի 24-ին, ՀՀ-ն և Եվրոպական Միությունը ստորագրել են ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Համաձայնագիրը իրավամբ կարող է կոչվել «համապարփակ», քանի որ ներառում է համագործակցության հիմնարար ոլորտներ, ինչպիսիք են՝ քաղաքական և իրավական հարցերը, սեկտորիալ համագործակցությունը տնտեսական և քաղաքական ոլորտներում, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, տրանսպորտը, հաղորդակցությունը, ֆինանսական ծառայությունները, զբոսաշրջությունը, ներդրումները, հետազոտությունը, առևտրային և ներդրումային քաղաքականությունը:

Եվրոպայի խորհրդին անդամակցությունն ամրագրել է ՀՀ տեղը եվրոպական ընտանիքում, քաղաքական, իրավական, մարդու իրավունքների ու մշակութային բնագավառներում եվրոպական չափանիշներին հետևելու երկրի ընտրությունը, իսկ ԵԱՀԿ-ին անդամակցությունը հնարավորություն է ընձեռնում մասնակցելու Եվրոպայի անվտանգության ու կայունության ապահովման, ժողովրդավարության և իրավական պետության չափանիշների տարածման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: ԵԱՀԿ-ն Հայաստանի համար առանձնապես կարևորվում է դարաբաղյան հակամարտության կարգավորման տեսակետից՝ կապված այդ նպատակով ձևավորված ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հետ:

Հայաստանը ԱՊՀ հիմնադիրներից մեկն է և ակտիվ մասնակցություն ունի դրա շրջանակներում համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման գործում:

Հայաստանը մեծապես կարևորում է աշխարհի տարբեր երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը և «հարևան պետությունների հետ բնականոն հարաբերություններ ունենալը, կողմակից է և ձգտում է տարածաշրջանում բաց սահմաններով և գործընկերության վրա խարսխված հարաբերություններ հաստատելուն՝ մշտապես պատրաստ լինելով առողջ ու իրատեսական երկխոսության»⁵:

Հայաստանի Հանրապետությանը 2016 թ. ապրիլի 16-ին Պեկինում երկխոսության գործընկերոջ կարգավիճակ է շնորհվել Շանհայի համագործակցության կազմակերպությունում: Մեր երկիրը առևտրային ներկայացուցչություններ ունի Առևտրի համաշխարհային կազմակերպությունում, Եվրոպական միությունում, Ռուսաստանի Դաշնությունում և Չինաստանում:

Այնուհանդերձ, միջազգային տնտեսական համագործակցության ոլորտում ՀՀ կողմից կատարված վիթխարի աշխատանքի արդյունքները, որոնք պետք է դրսևորվեին ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների ընդլայնման և կառուցվածքի բարելավման, աշխարհագրական և ապրանքային դիվերսիֆիկացման, օտարերկրյա ներդրումների ծավալների ավելացման, տարբեր երկրների հետ տեխնոլոգիական համագործակցության խորացման, տնտեսական ինտեգրման իրական և շրջափելի արդյունքների մեջ, դեռևս չեն համապատասխանում ազգային տնտեսության զարգացման վերը բերված ռազմավարական նպատակներին:

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրի առևտրային հաշվեկշիռը խրոնիկական բացասական է (Աղյուսակ 1): Ըստ ուսումնասիրվող առանձին տարիների՝ ներմուծումը գերազանցել է արտահանմանը 2-4 անգամ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջին տարում 2009 թ. -ին, ներմուծումը, նախորդ տարվա համեմատությամբ, կրճատվել է 25.0%-ով, իսկ արտահանումը՝ 36.4%-ով, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ծավալները կրճատվել են 19.5%-ով:

2010-ից սկսած, ՀՀ արտահանմանը բնորոշ է դրական դինամիկան, ինչը չի կարելի ասել ներմուծման և ՕՈՒԸ-երի ներգրավման առումով: 2016 թ. -ին, բազիսային տարվա համեմատությամբ, արտահանումն ավելացել է 0.9 մլրդ դոլարով, կամ կրկնապատկվել է: Ներմուծման պիկը կարելի է համարել 2013 թ. -ը, երբ դրա արժեքը հասավ 4.5 մլրդ դոլարի: ՕՈՒԸ-ների ներհոսքի ամենամեծ ծավալները ձեռք են բերվել 2008 թ. -ին, որոնք կազմել են 944 մլն. դոլար, իսկ իսկ 2015 թ. -ին, նշված տարվա համեմատությամբ, ՕՈՒԸ-ները կրճատվել են 81.1%-ով: Արտահոսքի ամենամեծ ծավալները տեղ են գտել 2016 թ. -ին, որը կազմել է 57 մլն. դոլար:

² <http://www.mineconomy.am/hy/93>

³ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն:

⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>

⁵ <http://www.mfa.am/hy/international-organisations/FAO/>

⁶ <http://www.mfa.am/hy/foreign-policy/>

ՀՀ արտահանման կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեցող ապրանքախումբը «Հանքաքար, խարամ և մոխիր»-ն է (Աղյուսակ 2): Դրա բաժինը 2016 թ.-ի արտահանման կառուցվածքում 22.8% էր: Հանքահումքային և գյուղատնտեսական ծագման ապրանքների բաժինը նույն թվականին հասել էր 92.0%-ի՝ 2012 թ. 68.8%-ի դիմաց: Այլ խոսքով, ՀՀ արտահանումը ավելի ու ավելի է հակվում դեպի արտահանման հանքահումքային կառուցվածքի կողմը:

Աղյուսակ 1.
ՀՀ կողմից ապրանքների արտահանման և ներմուծման, ՕՌԸ-ների արտահոսքի և ներհոսքի դինամիկան 2005-2016 թթ.ին (մլրդ. ԱՄՆ դոլլար)

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ապրանքների արտահանում	0.9	0.9	1.2	1.1	0.7	1.0	1.3	1.4	1.5	1.5	1.5	1.8
Ապրանքների ներմուծում	1.8	2.2	3.3	4.4	3.3	3.8	4.1	4.3	4.5	4.4	3.2	3.3
ՕՌԸ-երի արտահոսք	0.004	0.021	0.013	0.018	0.050	0.007	0.215	0.016	0.026	0.016	0.017	0.057
ՕՌԸ-երի ներհոսք	0.292	0.467	0.667	0.944	0.760	0.529	0.653	0.497	0.346	0.404	0.178	0.338

Պատահական չէ, որ «Doing Business – 2017» կողմից ներկայացված՝ բիզնեսի վարման դյուրինության վարկանիշային աղյուսակում Հայաստանը 2016թ. 35-րդ հորիզոնականից իջել է 38-րդ հորիզոնական, այսինքն բիզնես միջավայրի վատթարացումն ակնհայտ է⁶:

Դրանում իր մեղքի բաժինն ունեն և՛ երկրի տնտեսական քաղաքականության, և՛ տնտեսական դիվանագիտության իրականացման պատասխանատուները:

Աղյուսակ 2.
Հայաստանի Հանրապետության արտահանման ապրանքային կառուցվածքը 2012-2016 թթ.՝ ըստ 10 առավել մեծ ծավալներ ունեցող ապրանքախմբերի (մլն ԱՄՆ դոլար)⁷

Ծածկագիրը	Ապրանքախմբերը	2012	2013	2014	2015	2016
	Ընդամենը արտահանումը	1,428	1,468	1,490	1,483	1,808
26	Հանքաքար, խարամ և մոխիր	0,279	0,304	0,291	0,366	0,413
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	0,172	0,187	0,228	0,205	0,343
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	0,042	0,069	0,116	0,171	0,211
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	0,187	0,213	0,189	0,110	0,175
76	Այլումին և իրեր դրակից	0,088	0,085	0,093	0,086	0,083
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	0,015	0,033	0,047	0,061	0,075
72	Երկաթ և պողպատ	0,0119	0,105	0,110	0,056	0,066
74	Սև մետաղներ	0,111	0,095	0,075	0,072	0,066
27	Հանքային վառելիքային, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմային	0,108	0,088	0,090	0,092	0,061
70	Ապակի և դրակից իրեր	0,010	0,017	0,013	0,006	0,030

ՀՀ տնտեսական անարդյունավետ դիվանագիտության հիմնական պատճառը այդ ոլորտի ոչ բավարար ֆինանսավորումն է, որը չի հանգեցնում բանխմաց և երիտասարդ կադրերով արտաքին տնտեսական առաքելությունների համալրմանը, հետևաբար և հայրենական բիզնեսը արտասանմանում ներկայացնելուն, համարժեք տեղեկատվություն հավաքագրելուն ու տարածելուն: Այն, որ կադրերի դերը որոշիչ է ցանկացած ոլորտի զարգացման գործում՝ ապացուցման կարիք չունի: Տնտեսական դիվանագիտության ոլորտում ևս բարձր որակավորում ունեցող պրոֆեսիոնալ կադրերի դերակատարությունն անվիճելի է, հետևաբար միջազգային տնտեսական հարաբերությունների տարբեր բնագավառների մասնագետների առկայությունը արդյունավետ արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական պայմանն է:

Մեր երկիրը պրոֆեսիոնալ դիվանագետների պատրաստման ավանդույթներ չունի, որտեղ իրենց փորձն ու հմտությունները երիտասարդ սերնդին պետք է փոխանցեն հնուտ և փորձառու դիվանագետները: Այդ գործընթացը պետք է լինի անընդհատ: Իհարկե, դիվանագետների պատրաստումը բավականաչափ թանկ և երկարաժամկետ գործընթաց է: Ըստ որոշ գնահատականների՝ պրոֆեսիոնալ մեկ դիվանագետի պատրաստումը տևում է 10-15 տարի:

Դեսպանատները և հյուպատոսությունները, ըստ էության, ակտիվ մասնակցություն չունեն ՀՀ արտահանող ընկերությունների, բանկերի արտասանմանյան գործունեությանը: Այդ իրավիճակը, ամենից առաջ, արտաքին քաղաքականության ոլորտում ազգային տնտեսական և քաղաքական շահերի ոչ հստակ սահմանման արդյունքն է, այն դեպքում երբ մի շարք երկրներ տնտեսական շահերը միշտ դիտարկում են քաղաքական շահերին համարժեք:

Կարելի է եզրակացնել, որ ՀՀ տնտեսական դիվանագիտությունը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Արտաքին գործերի նախարարության գործունեությունը հիմնականում կենտրոնացված է երկրի քաղաքական շահերը, դիրքորոշումները և նախապատվությունները պաշտպանելու և ներկայացնելու կողմը: Արտաքին տնտեսական հիմնախնդիրների կարգավորման

⁶ Doing Business 2017. Equal Opportunity for All. World Bank Group. P. 7. <http://www.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB17-Full-Report.pdf>

⁷ https://www.trademap.org/Product_SelCountry_TS.aspx?nvpm=1|0511||TOTAL||2|1|1|2|1|1|1

ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվում են Տնտեսական զարգացման և ներդրումների, Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունների կողմից: Սակայն գործադիր իշխանության գործողությունների հստակ նպատակաուղղվածության բացակայությունը թույլ չի տալիս ժամանակին արձագանքելու միջազգային տնտեսական կոնյունկտուրայի փոփոխություններով պայմանավորված ազգային ընկերությունների պահանջներին:

*Ներկայացվել է 10.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*